ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Սիրելի՛ երեխաներ,

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:
Այս տոնը ևս մեկ առիթ է արժևորելու մեր կյանքի ամենամեծ հարստությունը՝ մեր մանուկներին, և վերահաստատելու նրանց իրավունքների պաշտպանության, կրթության ու բարեկեցության ապահովման հարցում մեր ունեցած բարձր պատասխանատվությունը: Երեխաները մեր հասարակության հիմքն են, մեր երկրի ու համայնքի ապագան, և նրանց համար անհոգ, անվտանգ ու զարգացման լայն հնարավորություններով հարուստ միջավայր ձևավորելը մեր առաջնահերթ պարտականությունն է:
Տաշիրի համայնքապետարանը շարունակական քայլեր է ձեռնարկում համայնքի կրթամշակութային կյանքի ակտիվացման, մանկապարտեզների ու խաղահրապարակների բարեկարգման ուղղությամբ, որպեսզի մեր փոքրիկները մեծանան արժանապատիվ և ժամանակակից պայմաններում: Մեր նպատակն է ստեղծել ամուր հիմքեր, որոնք թույլ կտան յուրաքանչյուր երեխայի լիարժեքորեն դրսևորել իր տաղանդն ու ներուժը:

Սիրելի՛ մանուկներ,
Մաղթում եմ ձեզ անսահման ուրախություն, անհոգ մանկություն և խաղաղ երկինք: Թող ձեր կյանքի յուրաքանչյուր օրը լցված լինի հարազատների ջերմությամբ, սիրով ու նոր բացահայտումներով: Եղե՛ք առողջ, բարձր առաջադիմությամբ ուրախացրե՛ք ձեր ծնողներին ու դարձե՛ք մեր հայրենիքի արժանի քաղաքացիները:
Հարգելի՛ մանկավարժներ և ծնողներ, ձեզ նույնպես շնորհավորում եմ այս գեղեցիկ օրվա առթիվ՝ մաղթելով համբերություն, կորով և անսպառ էներգիա՝ մեր ապագա սերնդի դաստիարակության պատասխանատու գործում: